

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ*

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

karine.arakelyan.2016@mail.ru

DOI: 10.54503/1829-4073-2022.3.218-232

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ ԱՆԳԼԵՐԵՆԻՑ ԿԱՏԱՐԱԾ ՉԱՓԱԾՈ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՂՈՒՆ

Քանալի բառեր¹ թարգմանություն, բնագիր, հեղինակ, թարգմանիչ, լեզու, խոսք, ոճ:

Ներածություն

Դարեր ի վեր թարգմանությունը եղել և մնում է գիտության և արվեստի չափազանց կարևոր մի բնագավառ: Ինչպես դիպուկ է նկատել ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը. «Թարգմանությունը ապակուտակ դրած մի վարդ է. գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարազատ բույրն ու հրապույրը: Սակայն միշտ պահանջելի է, որ նա հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին»:¹

405 թ.-ին հայոց գրերի գյուտով սկզբնավորվեց հայ մատենագրությունը, իսկ հինգերորդ դարը դարձավ հայ գրականության ոսկեդարը: Գրականությունը սկսում է զարգանալ երկու ուղղությամբ՝ ինքնուրույն ու թարգմանական, և, կարելի է ասել, նախ և առաջ թարգմանական: Առաջինը թարգմանվում է Գիրք գրոց Աստվածաշունչը, այս թարգմանությունն իր կատարելության համար հետագայում պիտի կոչվեր «թագուհի թարգմանութանց», ապա նաև հոգևոր-եկեղեցական բազմաթիվ այլ գրքեր: Երկրորդ ծավալվում էր թարգմանական շարժում: Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը և իրենց աշակերտները պատմության մեջ հայտնի են Թարգմանիչներ անվամբ, որոնց սրբադասել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և նրանց պատվին տոներ սահմանել:

* Հոդվածը ներկայացվել է 28.10.21, գրախոսվել է 28.10.21, ընդունվել է տպագրության 01.12.22:

¹ Թումանյան 1969, 38:

Միսաք Մեծարենցի անգլերենից կատարած չափածո...

Սուրբ Թարգմանիչների սկսած գործը շարունակվել է միշտ և բոլոր ասպարեզներում, բացառություն չէ գեղարվեստական գրականությունը: Անվանի գրողներ, բանաստեղծներ, թարգմանիչներ հաճախ են թարգմանել գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ՝ հայ ընթերցողին հաղորդ դարձնելով համաշխարհային գրականության գոհարներին իրենց մայրենի լեզվով: Բավական է հիշել Թումանյանին, Սևակին, Չարենցին, Սահյանին, Չորյանին և այլոց:

Անգլերենից կատարած չափածո թարգմանությունների լեզուն

Թարգմանական արվեստին անմասն չի մնացել և գեղարվեստական գրականության ասպարեզում իր ավանդին է ներդրել նաև XX դարասկզբի արևմտահայ ականավոր քնարերգու Միսաք Մեծարենցը:

Պետք է նշել, որ Մեծարենցը թարգմանություններ սկսել է կատարել պատանեկան տարիներից՝ գրական ասպարեզում առաջին քայլերին զուգընթաց: Թարգմանել է հանրաճանաչ հեղինակների՝ Չոսերի, Կիպլինգի, Փիքսթրի, Ֆիլդի, Ուայլդի, Մամին-Սիբիրյակի և այլոց գործերը՝ ինչպես արձակ, այնպես էլ չափածո: Այստեղ ուզում ենք անդրադառնալ չափածո թարգմանություններին, հատկապես դրանց լեզվական առանձնահատկություններին:

Միսաք Մեծարենցի թարգմանած առաջին բանաստեղծությունը XIV դարի անգլիացի անվանի բանաստեղծ և արձակագիր Ջեֆրի Չոսերի «Եռանգն» է: Այն առաջին անգամ տպագրվել է 1905 թ. մայիսին «Մասիս» շաբաթական հանդեսում: Այս թարգմանությանը Մեծարենցը կցել է նախաբան, որը, կարելի է ասել, լույս է սփռում այն հարցի վրա, թե ինչու է թարգմանվել հատկապես այս բանաստեղծությունը: Թարգմանիչը նշում է, որ Չոսերի այս եռանգը իրեն հիշեցնում է. «գրեթե իրեն ժամանակակից մեր սիրերգակներուն բանաստեղծությունները՝ սիրային զգացումի միևնույն կրակովը վառված...»²:

Բանաստեղծը նկատի ունի միջնադարյան հայ տաղերգուներին՝ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիներին, Հովհաննես Թլկուրանցուն, Մկրտիչ Նաղաշին, Գրիգորիս Աղթամարացուն և այլոց, որոնց քնարերգությունը մեր մշակութային ժառանգության անգին գանձերից է³:

Բնագրին հարազատ մնալով հանդերձ՝ Մեծարենցը բնագրին ցուցաբերել է բավական ազատ մոտեցում՝ սկսյալ վերնագրից, ապա նաև բանաստեղ-

² **Մեծարենց** 1981, 293: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքին կից՝ փակագծերի մեջ:

³ Տե՛ս Հայ հին և միջնադարյան քնարերգություն 1987, 255:

Առաքելյան Կ.

ծության կառուցվածքից ու լեզվից: Թարգմանված առաջին բառը՝ այսինքն բանաստեղծության վերնագիրը եզրույթ է: Անգլերեն վերնագիրը՝ Triple Roundel, որն, ինչպես նշում է Մեծարենցը, նույն ռոնդոն է և բառացի նշանակում է եռակի ռոնդել, թարգմանվում է եռանգ, այսինքն կատարվել է եզրույթի թարգմանություն, և հեղինակը փորձել է միջազգային տերմինը հայացնել: Այս բառն, ամենայն հավանականությամբ, հեղինակային նորակազմություն է: Ռոնդոն «բանաստեղծության կառուցման կայուն ձև է...հենվում է որոշ տողերի կրկնության և ամբողջ բանաստեղծության մեջ միայն երկու հանգի օգտագործման վրա: Սկիզբ է առել միջնադարյան ֆրանսիական պոեզիայում»⁴:

Եռանգը բարդ բառ է՝ կազմված եռ և անգ բաղադրիչներից: Եռ-ը բարդությունների բաղադրիչ է «երեք նշանակությամբ, իսկ անգ (անկ) արմատը ունի տարբեր իմաստներ»: Մասնավորապես, այն նշանակում է նաև հանգ (յ+անգ): Հրաչյա Աճառյանը նշում է. «յանգաւոր չափաբերեալ գրուածք, որ յանգ ունի»⁵: Այսպիսով՝ եռանգ նշանակում է երեք հանգ ունեցող ոտանավոր:

Ինչպես արդեն նշեցինք, ռոնդոն ունի կայուն կառուցվածք: Չոսերի ռոնդոն բաղկացած է տասներկու տողից. առաջին երեք տողերը նույնությամբ կրկնվում են բանաստեղծության վերջում, առաջինը և երկրորդը՝ նաև վեցերորդ և յոթերորդ տողերում: Ստացվում է, որ տասներկու տողի մեջ առաջին և երկրորդ տողերը կրկնվում են երեք, իսկ երրորդը՝ երկու անգամ:

Մեծարենցն այստեղ ցուցաբերել է բավական համարձակ մոտեցում՝ տասներկու տողանոց ռոնդոն թարգմանելով տասը տողով, ինչը նրան հնարավորություն է տվել խուսափելու կրկնություններից և շատ ավելի խտացնելու ասելիքը: Առաջին տողը՝ «Երկու աչքերդ պիտի սպանենն զիս մեկն» (293), կարելի է ասել, արտահայտում է բանաստեղծության հիմնական գաղափարը, որ թարգմանիչը կրկնել է վեցերորդ և տասներորդ տողերում, իսկ երկրորդ և երրորդ տողերը՝ «Իրենց գեղին ալ՝ չեմ կրնար դիմանալ, Սլաքն անոնց անցավ սրտիս իմ մեջեն» (293), որոնք փաստացի բացահայտում են առաջինի ենթաշերտերը, չի կրկնել ընդհանրապես: Փոխարենն ավելացրել է սեփական իններորդ տողը, որը ոչ միայն շեշտել է բանաստեղծությանը հուզական լիցքերը, այլև տրամաբանական շարունակությունն ու ամբողջացումն է նախորդ յոթերորդ ու ութերորդ տողերի:

Հավատարիմ ըզբեզ ես միշտ կը կարծեմ,

⁴ Զրբաշյան, Մախչանյան 1980, 268–269:

⁵ Աճառյան 1971, 197:

Ըլլաս կյանքիս կամ մահվանս տիրուհին.

Քանզի մահես վերջն ալ սերըդ պիտ' լսեմ (293):

Այս տողերի թարգմանության մեջ ևս առկա են հետաքրքիր նրբերանգներ: Queen բառը Մեծարենցը թարգմանել է ոչ թե թագուհի, այլ տիրուհի բառով: Այս բառերն ինչ-որ իմաստով հոմանիշ են, քանի որ տիրուհի ևս կարող է նշանակել իշխող կին, թագավորի կին, թագուհի, սակայն տիրուհի բառը շատ ավելի բազմաշերտ է և ներառում է իմաստներ, որոնք առավել քան համահունչ են բանաստեղծության բովանդակությանը: Ի թիվս այլ իմաստների, այն նշանակում է «Մեկի՝ մի բանի վրա մեծ ազդեցություն ունեցող կին, մեկի հիացմունքի՝ պաշտամունքի առարկա հանդիսացող կին»⁶:

Ինչպես տեսնում ենք, այսպիսի թարգմանությունը միանգամայն ճշգրիտ է արտահայտում քնարական հերոսի հոգեվիճակը, և խոսքը շահում է բանաստեղծական առումով: Ճիշտ է նկատվել, որ «բառական սխալներ մեկ անգամ չէ, որ հանդիպել են ամենաանվանի թարգմանիչների գործերում, և այնուամենայնիվ նրանց թարգմանությունները շատ ավելի գեղարվեստական և ուրեմն հավաստի են, քան այն մեծաթիվ թարգմանությունները, որտեղ յուրաքանչյուր բառ թարգմանված է մեծագույն ճշգրտությամբ»⁷:

«That ye be of my life and death the queen...»⁸. «Կյանքիս և մահվանս». թարգմանության մեջ չի պահպանվել և շաղկապը, այլ դարձել է *կամ*, որը համապատասխանում է անգլերենի *or* շաղկապին: Դարձյալ առկա են նրբերանգային տարբերություններ: Երկու դեպքում էլ շաղկապները համադասական են և կապակցում են համազոր անդամներ՝ կյանքը և մահը: Բնագրում *and* (և) շաղկապը շեշտում է այս հասկացությունների միասնության գաղափարը և երկու դեպքում էլ նույն թագուհու գոյությունը: Թարգմանության մեջ շեշտվում է այս երկու հասկացությունների՝ միմյանցից մեծ տարբերություն չունենալու գաղափարը և երկուսում էլ սրտի մեկ ու միակ տիրուհու գոյությունը, ինչը Մեծարենցը լավագույնս է արտահայտում արդեն հաջորդ՝ իր ավելացրած տողով. «Քանզի մահես վերջն ալ սերըդ պիտ' լսեմ» (293):

Չորրորդ և հինգերորդ տողերում կարդում ենք.

And but your word wol helen hastily

My hertes wounde, whyl that hit is grene...⁹

⁶ Աղայան 1976, 1444–1445:

⁷ Чукровский 1966, 291.

⁸ Chaucer 1913, 121.

⁹ Chaucer 1913, 121.

Առաքելյան Կ.

Green (կանաչ) նշանակում է թարմ, չսպիացած, երբ խոսքը վերքի մասին է, կամ ինչպես այստեղ՝ սրտին հասցված հարվածի: Այս բառն անգլերենում ունի մի շարք փոխաբերական իմաստներ, «որոշ կապակցություններում կորցնում է գույնի իր հատկանիշը՝ green table խաղաքարտի սեղան, green hom անփորձ անձնավորություն և այլն»¹⁰:

Հայերենում կանաչ բառն ունի թարմության, նորոգության իմաստը, սակայն որևէ կերպ չի առնչվում վերքի հետ, ուստի Մեծարենցն այն պարզապես փոխարինում է նոր ածականով և գրում.

Բառերըդ լոկ շուտով պիտի դարմանեն

Վերքը սրտիս, մինչ նոր է դեռ անիկա... (293):

Ընդհանուր առմամբ խոսելով այս բանաստեղծության թարգմանության մասին՝ պիտի նկատենք, որ չնայած թարգմանիչը ցուցաբերել է բավական ազատ մոտեցում, սակայն դրանից չեն տուժել ոչ իմաստային, ոչ գեղարվեստական կողմերն ու որակները: Այն, ինչ Չոսերը ցանկացել է ընթերցողին հաղորդել իր ռոնդոյով, ամբողջությամբ արտահայտում է Մեծարենցն իր բարձրակարգ թարգմանությամբ՝ տեղ-տեղ նույնիսկ ասելիքն ավելի խտացնելով ու հարստացնելով հուզական լիցքերով: «Թարգմանիչը արտահայտության արարիչն է,- գրում է հետազոտողը,- քանի որ դրա համար ունի իր սեփական նյութերը, որոնցից պիտի օգտվի՝ առանց որևէ ուղղորդման կամ կողմնակի օժանդակության: - «Իսկ սկզբնաղբյուրի հեղինակի արտահայտությունները»: Նա դրանք չի գտնելու իր մայրենի լեզվում, նա դրանք պետք է արարի»¹¹:

Հաջորդ հեղինակը, որի չափածո ստեղծագործություններից երկուսը թարգմանել է Միսաք Մեծարենցը, ամերիկացի բանաստեղծ Էոժեն Ֆիլդն է, որը հայտնի է իր մանկական բանաստեղծություններով: Մեծարենցը թարգմանել է նրա «Փոքրիկ կապույտ տղան» և «Հոլանդական օրորը»: «Հոլանդական օրորն» առաջին անգամ տպագրվել է 1907 թ. «Ծաղիկ տղոց» հանդեսում: Խմբագրությունը թարգմանությանը կցել է հետևյալ ծանոթությունը. «Երիտասարդ բանաստեղծ Միսաք Մեծարենց մանկանց Ծաղիկին համար անգլերենն թարգմանած է հետևյալ սիրուն քերթվածը, զոր հաճոյքով կը հրապարակենք» (427):

Պետք է նշել, որ Էոժեն Ֆիլդը գրել է մի քանի օրորներ՝ վերնագրերի միջոցով դրանք վերագրելով այս կամ այն ազգի, ինչպես՝ հրեական, հայկական

¹⁰ Բադիկյան 1986, 76:

¹¹ Федоров 2002, 14.

Միսաք Մեծարենցի անգլերենից կատարած չափածո...

և այլն: Հետաքրքրական է, որ այստեղ, մասնավորապես «Հայկական օրորում» բացի վերնագրից չկա հայկականը ուղիղ կերպով հիշեցնող որևէ բառ կամ արտահայտություն, սակայն ուշադիր ընթերցումը կարող է բացահայտել հետաքրքիր մանրամասներ: Հատկապես այստեղ առկա է երեք ծառատեսակի անվանում, որոնք սերտ առնչություն ունեն հայի ու հայկականության հետ և ընթերցողին տեղափոխում են հայկական միջավայր. նշենին, թթենին և նռնենին: Այսպես.

And thaw shalt swing in an almond- tree,
With a flood of moonbeams rocking thee, -
A silver boat in a golden sea, -
My velvet love, my nestling dove,
My own pomegranate – blossom!¹²

Մեծարենցի թարգմանած բանաստեղծությունը բնագրում վերնագրված է «Դանիական օրոր»: Նրա հերոսները հեքիաթային ձկնորսներ են, որոնք նավարկում են փայտե ոտնամանով և գնում ծովատառեխ որսալու: Այս ձկնատեսակը շատ տարածված է Ատլանտյան օվկիանոսում, նույնիսկ Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասը կատակով անվանում են herring-pond, այսինքն՝ ձկնաբուծարան: Ե՛վ Դանիայի, և՛ Հոլանդիայի ափերը ողողում են Հյուսիսային ծովի ջրերը, ու գուցե այստեղ է պետք փնտրել թարգմանության մեջ մեկը մյուսով փոխարինելու գաղտնիքի բացատրությունը:

Թարգմանության մեջ Մեծարենցը առավելագույն չափով հարազատ է մնում բնագրին, թեև առկա են նաև ինչ-ինչ նրբերանգային տարբերություններ: Փոքրիկ ձկնորսները նավարկում են փայտե կոշիկով: Անգլերեն shoe բառը Մեծարենցը թարգմանել է ոչ թե կոշիկ կամ ոտնաման, այլ մուճակ բառով: Աղայանի բացատրական բառարանն այս բառը համարում է հնացած և բացատրում որպես «մի տեսակ ոտնաման, չուստ»¹³:

Անգլերենում shoe բառը նշանակում է կոշիկ, բայց ամերիկյան անգլերենում բացի կոշիկից ունի նաև մաշիկ իմաստը: Ֆիլդը ամերիկացի հեղինակ է, բանաստեղծության բովանդակությունն էլ հուշում է, որ խոսքը սովորական կոշիկի մասին չէ, և Մեծարենցը կատարել է խիստ հաջողված թարգմանություն՝ մի քանի հոմանիշներից ընտրելով այս դեպքի համար ճշգրիտ համարժեքը, և ասելիքը հայերենով փոխանցել նույնությամբ:

¹² Field 1896, 151.

¹³ Աղայան 1976, 1038:

Առաքելյան Կ.

Ծեր լուսնի հարցին, թե ուր են գնում և ինչ են ուզում, փոքրիկ ձկնորսները պատասխանում են, որ եկել են ծովատառեխ որսալու: Ավելացնում են, որ ունեն ոսկե և արծաթե ցանցեր: Այս արտահայտությունը Մեծարենցը թարգմանել է «ցանցեր ոսկի և արծաթահյուս»՝ այսինքն ոսկի և արծաթ թելերով հյուսված, ինչը խոսքն ավելի տեսանելի է դարձրել:

And the wind that sped them all night long
Ruffled the waves of dawn¹⁴...

Այս երկատողը թարգմանված է.

Ջանոնք վարող քաղցր հովիկն ալ գիշերային

Յող ալիքները փոթփոթեց...(310):

Wind, որ նշանակում է քամի, թարգմանության մեջ դարձել է հովիկ, այսինքն *հով* գոյականն է փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով: Դրա հետ կիրառված է նաև *քաղցր* մակդիրը, որը բացակայում է բնագրում: Ruffle բայը բազմիմաստ է ու նշանակում է նաև թեթևակի ալեկոծվել: Մեծարենցն այն թարգմանել է փոթփոթել բայով, որը նույնպես բազմիմաստ է, և նրա փոխաբերական իմաստներից մեկն է. «Ալիքավորվել, ծփալ, կոհակներով՝ ալյակներով պատվել»¹⁵:

Հպանցիկ ակնարկ նետելով այս բանաստեղծության թարգմանությանը՝ տեսնում ենք, որ Մեծարենցը դարձյալ հարազատ է մնում բնագրին՝ երբեմն ցուցաբերելով առավելագույն ճշգրտություն, երբեմն էլ ստեղծագործական մոտեցում, ինչի արդյունքում խոսքը հագնում է նրբությամբ ու քնքշությամբ, ավելի ցայտուն է դառնում մանկան հոգուն այնքան հարազատ հեքիաթային գեղեցկությունը, և բանաստեղծությունը պատվում է մանկական վառ երևակայությանը խիստ բնորոշ երանգներով:

XX դարի առաջին կեսի գերմանացի փիլիսոփա, թարգմանիչ, մշակութաբան Վալտեր Բենյամինը կարծում էր, որ «եթե բնագրում բովանդակությունն ու լեզվական ձևը որոշակի միասնություն են կազմում, ինչպես պտուղն ու կեղևը, ապա թարգմանության լեզուն իր բովանդակությունը կրում է ինչպես լայն ծալքերով մի արքայական պատմուճան»¹⁶:

Երևի այս համատեքստում կարելի է բացատրել այն հանգամանքը, որ Մեծարենցը չի թարգմանել բանաստեղծության վերջին մասը, որտեղ բացատրվում են նախորդ խորհրդանշանական պատկերները, և ասվում, թե ինչ

¹⁴ <https://www.bartleby.com/360/1/71.html>

¹⁵ Աղայան 1976, 1524:

¹⁶ Հակոբյան 2017, 160:

Միսաք Մեծարենցի անգլերենից կատարած չափածո...

պետք է հասկանալ դրանք կարդալիս: Մասնավորապես, որ փայտե մուճակը փոքրիկի անվավոր մահճակալն է, այսինքն օրորի մի կարևոր բաղադրիչը և այլն: Ասվածից չի կարելի եզրակացնել, որ թարգմանությունը կիսատ է. այն անավարտ է և պատված է խորհրդավորությամբ, ինչը ստիպում է փոքրիկ ընթերցողին ինքնուրույն գտնել շատ հարցերի պատասխաններ ու բացահայտել գաղտնիքներ:

Էոժեն Ֆիլդի հաջորդ բանաստեղծությունը, որ թարգմանել է Մեծարենցը, վերնագրված է «Փոքրիկ կապույտ տղան»: Այն նույնպես առաջին անգամ տպագրվել է 1907 թ. «Ծաղիկ տղոց» հանդեսում: Այստեղ սկսյալ վերնագրից տեսնում ենք առավելագույն հարազատություն բնագրին, տեղ-տեղ անգամ բառացի, սակայն միանգամայն գեղարվեստական թարգմանություն, և միշտ առկա ստեղծագործական մոտեցում: Բանաստեղծությունը փոքրիկի կամ փոքրիկ կապույտ տղայի և նրա «անհայտ բացակայության» մասին է, ինչը զարմացնում է տղայի խաղալիքներին, որոնք պատվել են տարիների փոշով: Այս բանաստեղծությունը նմանատիպ թեմայով միակ բանաստեղծությունը չէ Էոժեն Ֆիլդի քնարերգության մեջ: Դրանցից մեկը նվիրված է հեռացող, անհետացող սրբին, որին քնարական հերոսը խնդրում է գտնել ու իրեն վերադարձնել իր կորսված զավակին:

O dear saint, that blessest men
With the grace of Christmas joy,
Soothe this heart with love again, -
Give me back my little boy!¹⁷

Սերտ առնչություն կա այս երկու բանաստեղծությունների միջև: Երկուսում էլ բացակա է փոքրիկը, և այդ բացակայությունը խորը վիշտ է պատճառում նրա մերձավորներին, նույնիսկ անշունչ առարկաներին՝ խաղալիքներին:

«Փոքրիկ կապույտ տղան» բանաստեղծության մեջ Մեծարենցը հավանաբար կրկնությունից խուսափելու համար toy բառը մի դեպքում թարգմանել է խաղալիք, մի դեպքում՝ պուպրիկ: Պուպրիկ գոյականը, որ միայն արևմտահայերենում գործածական բառ է և չի օգտագործվում արևելահայերենում, ավելի ունի տիկնիկի իմաստ, թեև կարող է նշանակել նաև «երեխայի խաղալիք»¹⁸: Նշված հատվածում խոսքը խաղալիք զինվորի, շնիկի մասին է, ըստ

¹⁷ Field 1986, 187.

¹⁸ Աղայան 1976, 1235:

Առաքելյան Կ.

այդմ, կարելի է թարգմանել պուպրիկ բառով: Թարգմանության մեջ առկա են հետաքրքիր նրբերանգներ ևս.

But the little toy friends are true!
Aye, faithful to Little Boy Blue they stand,
Each in the same old place...¹⁹

True բառը, որ հայերեն թարգմանվում է ճիշտ, ճշմարիտ, ունի նաև այլ իմաստներ և այստեղ նշանակում է հավատարիմ: Հաջորդ տողում առկա faithful բառը նախորդի հոմանիշն է: Մեծարենցն այս անգամ էլ է խուսափում կրկնությունից և հավատարիմ բառը կիրառում է միայն մեկ անգամ՝ faithful բառը թարգմանելիս՝ դրան նախորդող տողում գրելով. «Բայց բարեկամ պուպրիկները դեռ կը մընան», որը լիովին արտահայտում է տողի իմաստը՝ տիկնիկների հավատարմությունը: Հաջորդ տողի each բառը Մեծարենցը չի թարգմանում սովորական համարժեքով՝ յուրաքանչյուր կամ ամեն մի դերանուններով, այլ առօրյա-խոսակցական լեզվում չհանդիպող հին, գրքային մակբայով՝ անձնյուր:

Անչափ հետաքրքիր է բանաստեղծության վերջին քառատողի թարգմանությունը:

And they wonder, as waiting these long years through
In the dust of that little chair,
What has become of our Little Boy Blue
Since he kissed them and put them there.²⁰

Առաջին տողը թարգմանված է գրեթե բառացի: Երկրորդ տողը բացակայում է, փոխարենը երրորդ տողը կրկնվում է մասնակի տարբերությամբ.

Եվ, մինչ հոն են, այսքան երկա՛ր, երկա՛ր ատեն,
Կը զարմանան, թե ու՛ր մնաց փոքրիկ Տըղան,
Թե ինչ եղավ մեր Պըզտիկ Կապույտ Տըղան,
Որ զիրենք հոն դըրավ, պաչիկ առավ, գընա՛ց (311):

Մեծարենցը դիմում է կրկնության, և միանգամայն բնական է, որ կրկնում է այն տողը, որի մեջ, կարելի է ասել, ամփոփված է բանաստեղծության բովանդակությունը՝ փոքրիկ տղայի խորհրդավոր բացակայությունը: Վերջին տողը թարգմանված է գրեթե բառացի՝ մի փոքր, բայց շատ էական տարբերությամբ. ամենավերջում ավելացել է մեկ բառ՝ գնաց: Այս բառը գուցե կարե-

¹⁹ holyjoe.org/poetry/field4.htm

²⁰ holyjoe.org/poetry/field4.htm

լի է մեկնաբանել տարբեր կերպ և առաջանալու են բազմաթիվ հարցեր, որոնց դարձյալ չկա ուղիղ պատասխան, թեև կան հուշող տողեր, ինչպես.

Ու նիրհեց մեջն իր ճոնիկին.

Հոն երազեց խաղալիքներն իր անգին.

Ու՛ երազեն՝ հրեշտակի երգ մ'այս անգամ

Ըսթափեցուց մեր Պըզտիկ Կապույտ Մանչն հեք...(311):

Ամեն դեպքում գնաց բայն օգնում է ընթերցողին և թեկուզ դույզն չափով ցրում անորոշությունը, որ առկա է բնագրում: Ինչպես նկատում է հետազոտողը. «Արձակի թարգմանիչը ստրուկ է, բանաստեղծության թարգմանիչը՝ մրցակից»²¹:

Վերջին բանաստեղծությունը, որ անգլերենից թարգմանել է Մեծարենցը, անգլիացի բանաստեղծ, արձակագիր և քննադատ Թոմաս Լըվ Փիքոքի «Սիրո թաղումը» բանաստեղծությունն է: Այն առաջին անգամ տպագրվել է «Մասիս» հանդեսում 1907թ.: Այս ոտանավորը երեք քառատողից բաղկացած սիրային քնարերգության գողտրիկ մի նմուշ է: Թարգմանելիս նախորդների պես Մեծարենցը չի դավաճանել իր սկզբունքներին, հարազատ է մնացել բնագրին և չի մոռացել ստեղծագործական մոտեցման մասին:

„The Grave of Love“. այս վերնագիրը թարգմանված է «Սիրո թաղում»: Grave բառը հայերեն թարգմանվում է որպես դամբան, գերեզման, և թաղում բառը սրանց հոմանիշը չէ: Ուրեմն ինչու՞ է Մեծարենցը թարգմանել թաղում բառով: Պատասխանը տալիս է բնագրի ուշադիր ընթերցումը:

Բանաստեղծությունը խաբված սիրահարի հոգեկան տվայտանքների մասին է՝ ներկայացված այլաբերությունների միջոցով: Քնարական հերոսը փոս է փորում նոճու ստվերում և այնտեղ թաղում իր սիրո առարկայից ստացած խոստումները, ապա փոսը փակում է մամռոտ քարով ու շուրջը վարդից պսակ հյուսում: Այսպես ստեղծվում է սիրո դամբանը: Այսքանը Փիքոքը ներկայացնում է բանաստեղծության առաջին ութ տողերի մեջ՝ շատ սեղմ ու ազդեցիկ: Սակայն, ինչպես տեսնում ենք, այն ամբողջությամբ նկարագրում է գործողությունը, որի արդյունքն է սիրո դամբանը, այդ իսկ պատճառով Մեծարենցը վերնագիրը դարձրել է «Սիրո թաղումը»՝ նրան հաղորդելով շարժման ու գործողության հատկանիշներ, ինչը միանգամայն արդարացված է:

Առաջին քառատողի երրորդ և չորրորդ տողերում կարդում ենք.

And every pledge in earth I laid,

²¹ Жуковский 1901, 833.

Առաքելյան Կ.

That erst thy false affection gave.²²

Թարգմանությունը մոտ է բնագրին, սակայն ունի իմաստային և լեզվական տարբերություններ: Այստեղ Մեծարենցը, ինչպես նախորդ բանաստեղծության թարգմանության ժամանակ, դիմել է կրկնության՝ երրորդ և չորրորդ տողերում կրկնելով խոստումներ բառը՝ առավել ընդգծելով դրա դերն ու կարևորությունը խոսքաշարում: Այնուհետև բանաստեղծության չորրորդ տողից դուրս է թողել կեղծ որոշիչը, իսկ affection բառը չի թարգմանել իր իրական համարժեքներից որևէ մեկով՝ առերես սեր, սեթևեթանք, արհեստականություն, այլ թարգմանել է սեր: Արդյունքում ստացվել է հետևյալը.

Ու թաղեցի ես խոստումներդ ես,

Խոստումներ՝ զոր մերթ տըվալ սերդ ինձի (309):

Քնարական հերոսը «թաղում» է խոստումները, այսինքն բաժանվում է դրանցից, փորձում մոռանալ, մինչդեռ դրանցով է ապրել տևական ժամանակ, գուցե շատ երկար, և միանգամայն պարզ է դրանց կարևորությունը սիրահարի համար: Այս խոստումներն, ըստ բնագրի, տրվել են կեղծ, թվացյալ սիրով, սեթևեթանքով, այսինքն չի մնում որևէ մութ անկյուն: Քնարական հերոսը խաբված է եղել և իր խաբված լինելը գիտակցել է շատ ավելի ուշ: Թարգմանության մեջ չկա այս որոշակիությունը: Սիրած աղջիկը տվել է խոստումներ, իսկ գուցե դրանք այն ժամանակ անկեղծ են եղել, գուցե հետո՞ է ինչ-որ բան փոխվել, կամ գուցե ի սկզբանե՞ կեղծ են եղել: Հարցեր, որոնց պատասխանը չկա թարգմանության մեջ, և այն պիտի տա ընթերցողը: Ստեղծված կացությունը ելք չի ենթադրում, սակայն ի տարբերություն հեղինակի, թարգմանիչը հույսի գրեթե աննշան արահետ է թողնում:

Վերջին բանատան մեջ տեսնում ենք ծաղիկների և նոճու հակադրությունը: Սրանք նաև խորհրդանիշներ են. ծաղիկներն՝ աղջկա սիրո, անզոր ու տկար, որոնք մեկ օրվա կյանք անգամ չեն ունենում, այլ մեռնում են մայրամուտից էլ առաջ, իսկ նոճին՝ սիրահարի ցավի, որը խորն է ու դժվարակիր, բայց և հայտնի է, որ տառապանքն ունի մաքրող ու զորացնող հատկություն. այսպես է նաև այս դեպքում, երբ նոճին դիմակայում է տարիների փորձությանը.

Irail as thy love, the flowers were dead

Ere yet the evening sun was set:

But years shall see the cypress spread,

²² https://englishverse.com/poems/the_grave_of_love.

Immutable as my regret.²³

Immutable ածականը, որ նշանակում է անփոփոխ, անփոփոխելի, Մեծարենցը թարգմանում է անսասան բառով, որը փոխաբերական մակդիր է և թվում է մի քիչ անսովոր կամ անհարիր *ցավ* բառի համար, սակայն էլ ավելի է խորացնում հակադրությունը և մակադրյալին հաղորդում յուրահատուկ վեհություն ու գեղեցկություն, ինչպես լինում է ցավը արժանապատվորեն կրող ուժեղ անհատի պարագայում.

Մեռան ծաղիկներն՝ անզոր՝ սիրույդ պես,

Արևմարքեն ալ առաջ իրիկվան.

Սակայն՝ իմ ցավիս նըման անսասան

Նոճին՝ տարինե՛րն են հանդիսատես (309):

Ուշագրավ նմանություն կա Մեծարենցի թարգմանած այս և Մեծարենցի հեղինակած «Մեռելոց» բանաստեղծությունների միջև: «Մեռելոցն» այն եզակի բանաստեղծություններից է, որոնք ամբողջությամբ այլաբանություն են՝ սկսյալ վերնագրից մինչև վերջին տողը: Քնարական հերոսը մեկը մյուսի հետևից բաժանվում է իր սերերից: Այստեղ սիրած էակներին մարմնավորում են վարդերը: Սպիտակ վարդը սառչում է ձմռանը, դամասկյան վարդը նվաղում, աշնան շունչը հարվածում է դեղին վարդին: «Վարդերից» մնում է միայն հիշատակ, խորը կսկիծ ու տվայտանք: Հերոսն ապրում է թախծոտ հուշերով, սակայն, ի վերջո, անհնար է անընդհատ տրվել հիշողությունների, և նա ճիգ ու ջանք է գործադրում մոռանալու անցյալը, ու ծնվում է վերջին այլաբանական պատկերը.

Ու մըտածումս ալ, հ՛եք նժդեհ քահանա,

Իսաչ հանելով կ'ըսե բառեր լուսեղեն,

Ու նայվածքս կը բաժնըվի երբ հողեն,

Հոգիս զանոնք անգա՛մ մըն ալ կը մոռնա...(101):

Լուսեղեն խոսքերն ի զորու չեն ամոքելու կորստի ցավը, մոռացնել տալու անցյալը: Իսկ «անգա՛մ մըն ալ» կապակցությունը պարզորոշ ցույց է տալիս, որ սա հերթական փորձն է սեփական անձից փախչելու, որը, ինչպես մյուս բոլորը, դատապարտված է ձախողման:

Եզրակացություններ

«Թարգմանիչները լուսավորության փոստային ձիերն են»²⁴, - մի առիթով ասել է ռուս ականավոր բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինը: Ինչպես կարելի է

²³ https://englishverse.com/poems/the_grave_of_love.

Առաքելյան Կ.

Եզրակացնել այս համառոտ քննությունից, արևմտահայ քնարերգու Միսաք Մեծարենցը լուրջ հայտ է ներկայացրել իբրև թարգմանիչ, թեև ցավոք չի հասցրել շատ գործեր թարգմանել: Թարգմանել սկսել է վաղ հասակից, թարգմանել է և՛ արձակ, և՛ չափածո: Չափածո թարգմանությունները կատարել է անգլերենից՝ դրսևորելով այդ լեզվի հրաշալի իմացություն: Աչքի է ընկել բացառիկ լեզվամտածողությամբ և լեզվազգացողությամբ, բնագրին հարազատ մնալով՝ ցուցաբերել է նրբազգաց բանաստեղծին հատուկ ստեղծագործական մոտեցում: Լիովի օգտվել է հայերենի ընձեռած անսպառ հնարավորություններից, ընտրել ճշգրիտ ու տեղին համարժեքներ, տեղ-տեղ ասելիքն ավելի խորացրել ու հարստացրել հուզական լիցքերով՝ բանաստեղծի իր տաղանդն ամբողջությամբ ի սպաս դնելով թարգմանչի առաքելության հաջողությանը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան», Երևան, 1616 էջ:

Աճառյան Հ. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 698 էջ:

Բաղիկյան Խ. 1986, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 356 էջ:

Թումանյան Հ. 1969, Երկերի ժողովածու, հ. 4, «Հայաստան», Երևան, 488 էջ:

Հակոբյան Ա. 2017, Վալտեր Բենյամին. Թարգմանչի պարտքը, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, «Գիտություն» հրատ., Երևան, 390 էջ:

Հայ հին և միջնադարյան քնարերգություն 1986, «Լույս», Երևան, 464 էջ:

Մեծարենց Մ. 1981, Երկերի լիակատար ժողովածու, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 456 էջ:

Ջրբաշյան Է., Մախչանյան Հ. 1980, Գրականագիտական բառարան, «Լույս», Երևան, 352 էջ:

Жуковский В. 1901, Сочинения в стихах и прозе. под. ред. П.А. Ефремова-, изд. И. Глазунова, Санкт-Петербург, 1007 с.

Пушкин А. 1986, Сочинения в трех томах, т. третий, изд. «Художественная литература», Москва, 528 с.

Федоров А. 2002, Основы общей теории перевода (лингвистические проблемы), изд. «Филология три», Санкт-Петербург, 416 с.

²⁴ Пушкин 1986, 490.

Чуковский К. 1966, Собрание сочинений в шести томах, т. третий, изд. «Художественная литература», Москва, 839 с.

Chaucer G. 1913, The Complete Works of Geoffrey Chaucer, London, a.o., at the Clarendon Press, 732 p.

Field E. 1986, Second Book of Verse by Eugene Field, New York, Charles Scribner's Sons, 260 p.

https://englishverse.com/poems/the_grave_of_love.

holyjoe.org/poetry/field4.htm.

<https://www.bartleby.com/360/1/71.html>.

ЯЗЫК ПЕРЕВОДОВ МИСАКА МЕЦАРЕНЦА ИЗ АНГЛИЙСКОЙ ПОЭЗИИ

АРАКЕЛЯН К.

Резюме

Ключевые слова: перевод, оригинал, автор, переводчик, язык, речь, стиль.

Перевод всегда был одним из лучших способов межкультурного общения народов. Многие представители армянской культуры внесли свой вклад в искусство перевода, в их числе известный западноармянский поэт начала XX века Мисак Мецаренц, переводивший как прозу, так и поэзию.

Статья посвящена исследованию лингвистических особенностей переводов Мецаренца из английской поэзии, в частности, ряда поэтических произведений Чосера, Филда и Пикок. В своих переводах Мецаренц оставался близок к оригиналу, избегал дословности, но при этом проявлял творческий подход для достижения эмоционального накала.

THE LANGUAGE OF MISSAK METSARENTS' VERSE TRANSLATIONS FROM ENGLISH

ARAKELYAN K.

Summary

Key words: translation, original, author, translator, language, speech, style.

Առաքելյան Կ.

Translation has always been one of best ways of intercultural communication between peoples. Many representatives of Armenian culture have contributed to the art of translation, including the famous Western Armenian poet of the early twentieth century, Missak Metsarents, who translated both prose and poetry.

The article is devoted to the study of the linguistic features of Metsarents' translations from English poetry, in particular a number of Chaucer's, Field's and Peacock's poetic works. In his translations Metsarents remained close to the original, avoided verbatim, but at the same time showed a creative approach to achieve emotional intensity.